ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆ
Տեսուչ՝ Ս. Յարութեան Տաճարի

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի

Մօտ երկտասնեակ և աւելի տարիներ են որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ յատակի սալաքարերը, բաւական թիւով, մաշած են և կոտրտած, որոնք նորոգութեան անհրաժեշտ կարիք ունին։ Միայն այդ քարերը նորոգել պիտի նմանէր կարկտան դնել յատակին, որ պիտի պարզէր ուրիշ տգեղութիւն մը։ Երբ այս մասին խորհրդակցեցանք բարեկամի մը՝ Պրն. Բագրատունի Արտեմեանին հետ, ինք յանձն առաւ հոգալ ամբողջ ծախսերը։ Այս մասին, ժամանակին տեղեակ պահեցինք Պատրիարք Սրբազան Հայրը և ներկայացուցինք Տնօրէն Ժողովին, առանց մանրամասնեալ հաշուետուութեան։ Պատրիարք Սրբազան Հայրն ու Տնօրէն Ժողովը համաձայն գտնուեցան ծրագրին։ Մենք սպասեցինք մի քանի ամիսներ մինչեւ որ բարերարը՝ Պրն. Արտեմեան մեզի վստահեցուց թէ ինք յօժար էր իր ծնողաց յիշատակին հոգալ նորոգութեան ծախսերը և թէ մենք կրնայինք սկսիլ նորոգութեան։

Յունաստան ապրող և մարմարի գործ ընող վարպետ Պրն. Աշոտ Բաղդասարեանին հետ մենք հաղորդակցեցանք, որ յանձն առաւ նախ այցելել և քննել աշխատանքի վայրը։ Իր վերադարձին, մեզի տեղեկացուց ապսպրուելիք մարմարներուն տեսակին ու քանակին և անոնց ծախսի մասին։ Մենք անմիջապէս խօսեցանք Պրն. Արտեմեանին հետ և անոր իմացուցինք մօտաւոր ընդհանուր ծախսը, որուն համաձայն գտնուեցաւ։ Ծրագրուեցաւ աշխատանքները սկսիլ 2017 թուականի Զատիկէն ետք, այն մտադրութեամբ, որ մինչ այդ Սուրբ Գերեզմանի նորոգութիւնները եւս կը վերջանային և Տաճարին մէջ տեղի ունենալիք հրաշափառներուն և արարողութիւններուն քանակը եւս իրենց նուազագոյնին կ՚իջնէին, և այդպիսով կարելի կ՚ըլլար նորոգութիւնները կատարել առանց արգելքի։ Այս նորոգութեանց մասին տեղեկացուցինք Լատիններուն և Յոյներուն։

Ըստ վարպետ Պրն. Բաղդասարեանի հաշուարկութեան, եթէ իր աշխատաւորներէն երկուքը կամ երեքը կարենար բերել, կը խոստանար նորոգութիւնները աւարտել մէկ ու կէս ամիսէն և կամ առաւելագոյնը երկու ամիսէն։ Պրն. Բաղդասարեան յայտնեց թէ իր բերելիք աշխատաւորները կրնային ըլլալ Յոյն կամ Թուրք։ Մենք իր այդ աշխատաւորները բերելուն հակառակեցանք և չուզեցինք։ Կարողացանք կարգադրել որ Հայաստանէն երկու վարպետներ գան և որպէս կամաւոր աշխատին Պրն. Բաղդասարեանի հսկողութեան տակ։

Աշխատանքները սկսան Յունիս ամսուան մէջ այս երկու հայ վարպետներով՝ Պրն. Բաղդասարեանի հսկողութեան տակ։ Ըստ մեր վկայութեան, նկատի ունենալով որ աշխատանքները պիտի վերջանային Յուլիս ամսուան վերջաւորութեան, աշխատանքները կը դանդաղէին, և այս երկու հայ վարպետները, զանազան պատճառներով

չէին խոստանար վերջացնել աշխատանքները, նոյնիսկ Սեպտեմբեր ամսուան վերջերը։ Պրն. Բաղդասարեան եւս մտահոգ, մեզի յայտնեց որ եթէ այդ հայ վարպետները պիտի աշխատին ինք չէր կրնար շարունակել և վերջացնել աշխատանքները պահանջուած ժամանակին։ Նկատի ունենալով որ մեր համաձայնութիւնը Պրն. Աշոտին հետ պէտք էր, որ իր միջոցաւ կատարուէր, կարգադրութիւն մը որ կարելի եղածին չափ աշխատանքները մասնագիտական ձեւով վերջանային, գոնէ Օգոստոս ամսուան վերջաւորութեան։ Այս աշխատանքին մէջ նկատի ունինք նաեւ մեր Վերնատան յատակի սալաքարերու փոփոխութիւնը։ Պրն. Բաղդասարեան խոստացաւ որ ինք կրնայ վերջացնել թէ՛ Լուսաւորիչ եկեղեցւոյ և թէ՛ Վերնատան աշխատանքները մինչեւ Օգոստոս ամսուան վերջը, եթէ իր երկու Թուրք աշխատաւորները բերէր, որովհետեւ անոնք իր աշխատաւորները ըլլալով, 25 տարուան փորձառութեամբ լաւ գիտէին իր պահանջքները և աշխատելու կերպը առանց դժուարութեան։ Մեզի համար շատ կարեւոր էր աւարտել աշխատանքները ամառը չվերջացած։ Ուստի պատասխանատուութեանս տակ իր աշխատաւորները բերինք և Յուլիս 20-ին սկսան աշխատիլ։

Երկրորդ Գողգոթա (Վերնատուն)

Քանիցս Վերնատան միաբաններու սենեակներուն ջուրի խողովակները, որոնք կ՚անցնին Վերնատան փտած յատակին տակէն, ջուրերը թափանցելով հետքեր թողած են ներքեւի առաստաղներուն վրայ, որոնք ներկուած են, սակայն կարլի չէ եղած մի անգամ ընդմիշտ կասեցնել խոնաւութիւնը առանց փոխելու այդ թաղուած և փտած խողովակները։ Փոխելու համար այդ խողովակները, պէտք էր քանդել յատակի սալաքարերը։ Այդ պատճառով, որոշուեցաւ փոխել սալաքարերը եւս, որոնց մասին տեղեակ պահուած է Պատրիարք Սրբազան Հայրը և Տնօրէն Ժողովը։ Այս նորոգութեանց համար գտած ենք բարերար մը, յանձինս Ալեքսանտր Ասերեանի, որ յանձն առաւ իր նուիրատուութեամբ հոգալ այդ ծախսերը։

Հանդերձից Բաժանման Խորան

Այս խորանին յատակը վերջին անգամ նորոգուած է 2011-ին Գագիկ Մաթէոսեանի նուիրատուութեամբ։ Այս խորանին յատակը կրկին անգամ նորոգելու համար յատուկ ծրագիր մը տակաւին չէ ներկայացուած Պատրիարք Սրբազան Հօր և կամ Տնօրէն Ժողովին։ 2011 թուականին նորոգութիւն կատարողները եղան մեր վանքի աշխատաւորները։ Ներկայիս յատակին քարերուն քանի մը հատը սկսած են շարժիլ։ Ուրեմն կը մտածենք կրկին նորոգել աւելի լաւ մարմարներով, առանց յաւելեալ ծախսի, բացի ներկայ երկաթեայ բազրիքները մարմարով փոխելու։ Յատակի համար պատրաստ մարմար ունինք։ Այս յաւելեալ ծախսը պիտի հոգայ Պրն. Մաթէոսեանը։ Ուրեմն, Յուլիս ամսուն Տնօրէն Ժողովին ներկայացուցինք այս խորանին յատակը կրկին անգամ նորոգելու ծրագիրը, որ վաւերացուեցաւ։

Վարպետ աշխատաւորներու փոփոխութիւն

Թուրք աշխատաւորները պահելու և չպահելու հարցը խանգարեց խաղաղ աշխատանքի մթնոլորտը, և հակառակ մեր պնդումին որ Թուրք աշխատաւորները մնան, սակայն անոնք զգալով կացութիւնը՝ իրենք որոշեցին հեռանալ։ Մինչ անոնց այս որոշումը, մենք արդէն կապի մէջ էինք Պրն. Արտեմեանի հետ, որ յօժարեցաւ երկու հայ վարպետներ գտնել և ուղարկել իր ծախսով, վերջացնելու համար սկսուած

աշխատանքը։ Թուրք աշխատաւորները մեկնեցան Յուլիս 26-ին, իսկ Ադամեան և Նահապետեան հայ աշխատաւորները մեկնեցան Օգոստոս 6-ին։ Աշխատանքները կանգ առին 7-8 օրեր։ Պրն. Արտեմեանին գտած վարպետները՝ Պրն. Սէրկէյ Բամպուխճեան և Հմայեակ Խանայեան եկան Երուսաղէմ Օգոստոս 1-ի գիշերը, և յաջորդ օրն իսկ սկսան աշխատանքի առանց ժամանակ կորսնցնելու։ Ըստ իրենց հաշուարկութեան, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ յատակի աշխատանքները կը վերջանան 20-25 օրերու ընթացքին։ Անոնք որոշ չափով սալայատակեցին նաեւ Երկրորդ Գողգոթայի յատակը, բայց իրենց աշխատանքի ժամանակը վերջացած ըլլալուն, անոնք պէտք էր մեկնէին։ Ուրեմն կապ հաստատեցինք, բարերար Պրն. Արմէն Ասատրեանին հետ, որ իր իսկ ծախսով, երկու լաւ վարպետներ ուղարկեց, երկու եղբայրներ՝ Յովհաննէս և Պետրոս Սարգսեաններ, որոնք աւարտեցին մնացեալ աշխատանքները։ Մինչ այդ որոշած էինք և ապսպրած մարմարներ երկու գահերու և բազրիքի համար, մին՝ Գր. Լուսաւորչի և միւսը՝ Վերնատան բաժնին, իսկ բազրիքը՝ Հանդերձից Բաժանման խորանի համար։ Ուրեմն, երկրորդ անգամ ըլլալով բերինք այս երկու եղբայրները, մարմարեայ գահերը և դասի մարմարեայ նստարանները և բազրիքը տեղադրելու, և վերջացնելու Հանդերձից բաժանման խորանի մնացեալ աշխատանքները՝ յատակի և բազրիքի զետեղման։ Առիթէն օգտուելով, նորոգել և մաքրել տուինք Հանդերձից Բաժանման խորանի պատկերը։ Ահա այսպիսով աւարտեցան երեք սրբավայրերու նորոգութեան աշխատանքները։

Ինչպէս յիշեցինք այս բոլոր նորոգութիւններուն համար կարելի եղաւ գտնել բարերարներ, որոնց համար շնորհակալութիւն կը յայտնենք իրենց բարեսիրտ նուիրատուութեանց համար։ Թող Աստուած օրհնէ և առողջ պահէ զիրենք և իրենց ընտանիքի անդամները և օրհնէ բոլորին և վարձահատոյց ըլլայ։

Նորոգութիւններու հաշուարկում
Restoration Account

Անուն վայրի **Վերնատուն ի ՍՅ -- Gallery**
Սկսած թուականը Օգոստոս 2017
Վերջացած թուականը Դեկտեմբեր 2017

h/h	օր/ա/տ	Նուիրատու	Մուտք	Ծախս	Մնացորդ
1	4/12/2017	donation karlen hakobyan	54,750.00		54,750.00
2	8/11/2017	george ballout		40,000.00	14,750.00
3	9/14/2017	hovhanes sarkissian - worker		1,588.50	13,161.50
4	9/14/2017	ticket o armenia & moscow		1,602.62	11,558.88
5	9/30/2017	gallery - various supplies		936.00	10,622.88
6	10/12/2017	hovhannes sarkissian & bedros tickets		1,165.12	9,457.76
7	10/18/2017	hakam building material		5,800.00	3,657.76
8	10/31/2017	gallery - various supplies		1,280.00	2,377.76
9	10/31/2017	marti deba s.l. - marble		52,279.85	-49,902.09
10	12/31/2017	gallery - various supplies		19,809.00	-69,711.09
11	1/22/2018	veritas logistics ltd. - custom duties		22,612.57	-92,323.66
12	4/21/2017	donation olga	4,745.00		-87,578.66
13					-87,578.66
14					-87,578.66
15					-87,578.66
16					-87,578.66
17					-87,578.66
18					-87,578.66
19					-87,578.66
20					-87,578.66
Ընդհ. գումար			**59,495.00**	**147,073.66**	**-87,578.66**

Նորոգութիւններու հաշուարկում
Restoration Account

Անուն վայրի **Ս. Գրիգոր Լուսաւորիչ ի ՍՅ - St. Helena Chapel in HS**
Սկսած թուականը Յունիս 2017
Վերջացած թուականը Դեկտեմբեր 2017

հ/հ	օր/ա/տ	Նուիրատու	Մուտք	Ծախս	Մնացորդ
1	1/1/2017	b/f	288,000.00		288,000.00
2	1/9/2017	ashot baghdassaryan - tiles		29,084.00	258,916.00
3	1/9/2017	stone gallery - tiles		62,000.00	196,916.00
4	1/23/2017	ashot baghdassaryan - tiles		16,686.60	180,229.40
5	1/23/2017	ashot baghdassaryan - hotel portugal		2,030.00	178,199.40
6	3/21/2017	ashot baghdassaryan - tiles		21,786.64	156,412.76
7	3/31/2017	ashot baghdassaryan - tiles		20,971.20	135,441.56
8	3/30/2017	stone gallery - tiles		62,000.00	73,441.56
9	3/31/2017	stone gallery - tiles		16,254.00	57,187.56
10	4/12/2017	donation alexander assisyan	54,750.00		111,937.56
11	4/20/2017	ashot baghdassaryan - tiles		12,024.30	99,913.26
12	4/24/2017	ashot baghdassaryan - tiles		40,191.07	59,722.19
13	5/8/2017	argypolou dimitra - tiles		52,371.39	7,350.80
14	5/17/2018	ashot baghdassaryan - tiles		24,299.75	-16,948.95
15	5/17/2017	veritas - custom duty		10,738.79	-27,687.74
16	6/6/2017	ashot baghdassaryan - tiles		16,000.00	-43,687.74
17	6/6/2017	ashot baghdassaryan - tiles		19,900.00	-63,587.74
18	6/7/2017	ashot baghdassaryan - tiles		23,880.00	-87,467.74
19	6/24/2017	donation St. nerses Armenian Seminary	188,544.24		101,076.50
20	6/30/2017	george ballout - preparing floor for tyling		25,000.00	76,076.50
21	7/10/2017	veritas - custom duty		10,851.31	65,225.19
22	7/12/2017	george ballout - preparing floor for tyling		31,400.00	33,825.19
23	7/24/2017	ashot baghdassaryan - stipend		21,000.00	12,825.19
24	7/28/2017	moustafa salioglou -ticket		1,120.50	11,704.69

25	7/28/2017	Sali salioglou - ticket		1,120.50	10,584.19
26	7/28/2017	sali & Moustafa - stipend		6,225.00	4,359.19
27	8/2/2017	donation pakraduni ardemian	84,000.00		88,359.19
28	8/9/2017	hakam - building material		14,000.00	74,359.19
29	8/9/2017	sarpion adamyan & tigran nahapetyan - tickets		1,747.20	72,611.99
30	8/24/2017	amaiak & sergi - tickets		2,512.28	70,099.71
31	8/24/2017	ashod & Sali - tickets		2,812.74	67,286.97
32	8/24/2017	amaiak - ticket		1,781.04	65,505.93
33	8/24/2017	amaiak khanaian		3,600.00	61,905.93
34	8/31/2017	donation pakraduni ardemian	25,550.00		87,455.93
35	8/31/2017	labour paid by pakraduni ardemian		25,550.00	61,905.93
36	8/31/2017	labour + material for polishing tyles		5,860.00	56,045.93
37	9/6/2017	samer building material		12,316.00	43,729.93
38	9/30/2017	c/o fr. Samuel for st. helena / various expenses		7,462.00	36,267.93
39	10/18/2017	marti & deba spain - tyles		83,646.00	-47,378.07
40	1/22/2018	veritas logistics ltd. - custom duties		22,612.57	-69,990.64
41	4/11/2018	donation pakraduni ardemian	17,500.00		-52,490.64
Ընդհ. գումար			**658,344.24**	**710,834.88**	**-52,490.64**

Նորոգութիւններու հաշուարկում
Restoration Account

Անուն վայրի **Հանդերձից Բաժանման Խորան / Alter of Casting Lot**
Սկսած թուականը Նոյեմբեր 2017
Վերջացած թուականը Դեկտեմբեր 2017

h/h	օր/ա/տ	Նուիրատու	Մուտք	Ծախս	Մնացորդ
1	3/30/2017	donation gagic & dickran matevosian	36,000.00		36,000.00
2	10/31/2017	marti deba s.l. - marble		31,367.00	4,633.00
3	11/1/2017	restoration of alter picture		1,200.00	3,433.00
4	1/22/2018	veritas logistics ltd. - custom duties		8,592.00	-5,159.00
5					-5,159.00
6					-5,159.00
7					-5,159.00
8					-5,159.00
9					-5,159.00
10					-5,159.00
11					-5,159.00
12					-5,159.00
13					-5,159.00
14					-5,159.00
15					-5,159.00
16					-5,159.00
17					-5,159.00
18					-5,159.00
19					-5,159.00
20					-5,159.00
Ընդհ. գումար			**36,000.00**	**41,159.00**	**-5,159.00**



1- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի - Սուրբ Յարութիւն

Գործածուած Մարմարներ

1- Վարդագոյն մարմար ---------- 105 մ²
2- Սպիտակ մարմար ---------- *45 մ²*
3- Սպիտակ մոխրագոյն խառնուած - *28 մ²*
4- Կանաչ ---------- *63 մ²*

2- ՑԱՏԱԿԱԳԻԾ

ՎԵՐՆԱՏՈՒՆ, ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂԳՈԹԱ

Սուրբ Յարութիւն



Գործածուած Մարմարներ

1- Վարդագոյն մարմար ---------- 87 մ²
2- Սպիտակ մարմար ---------- 46 մ²
3- Սպիտակ մոխրագոյն խառնուած - 62 մ²
4- Կանաչ ---------- 18 մ²

3- Հանդերձից Բաժանման Խորանի յատակագիծը չկայ, բայց յատակի նորոգութեան համար գործածուեցաւ 10 - 12 մ² ճերմակ մարմար:

Նորոգուած յատակ, մարմարեայ նոր գահ եւ մարմարեայ աշտանակ
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի - Սուրբ Յարութիւն

Նորոգուած յատակ մարմարեայ նոր գահով - Երկրորդ Գողգոթա Սուրբ Յարութիւն

Նորոգուած յատակ Երաշխաւորաց
խորանի - Երկրորդ Գողգոթա
Սուրբ Յարութիւն

Նորոգուած յատակ եւ բազրիք
Հանդերձից բաժանման խորան
Սուրբ Յարութիւն